

ԱՄԵՆ. Տ. ՏԻՄՈԹԵՇՈՍ ՊԱՏՐԻԱՐք ՅՈՒՆԱՑ

Ճարաթ, 31 Դեկտեմբեր 1955ի երեկոյեան ժամը 5ին, Ա. Յարութեան Տաճարի յունաց մեծ զանգակը ընդհատ ընդհատ կը գուժէր մահը երուսաղէմի յունաց Ամենապատիւ Տ. Տիմոթէոս պատրիարքին, որ աւելի քան տասնամեակ մը հիւանդագին վիճակի մէջ կը գտնուէր :

Նորին Ամեն. Տիմոթէոս պատրիարք ծնած է Սամոս կղզին մէջ 1878ին : Նախնական եւ միջնակարգ կրթութիւնը ստացած է իր ծննդավայրի վարժարան-ներուն մէջ ու 1898ին տիրացած ուսման բարձրագոյն վկայականի : Նոյն տարին երուսաղէմ զալով կը մտնէ յունաց վանքի կրօնական Ընծայարանը եւ կը վկայուի 1905ին : 1905ին բահանայ ծեռնազրուելէ ետք, կը մեկնի Oxford (Անգլիա), որ կը հետեւի աստուածաբանական եւ բանասիրական դասընթացքներու : Վերադառնալով երուսաղէմ, 1909ին կը նշանակուի խմբագիր պատրիարքարանի պաշտօնաթերթ «Նևա Սիոն»ի, եւ նոյն ատեն կը կարգուի տեսուչ զրատան : 1910ին կ'ընտրուի անդամ Սինոդի, իսկ 1916ին կը ծեռնազրուի եպիսկոպոս : 1921ին կը ըստանայ արքութիւն : 1928ին կը նշանակուի Բնեթղենէմի պատր. փոխանորդ, իսկ 1935 Յուլիս 22ին կ'ընտրուի պատրիարք երուսաղէմի Աթոռին, ու 1939 Ապատ. 27ին կը ստանայ Բրիտանական կառավարութենէն իր պատրիարքական հաստատման հրովարտակը, Ա. Աթոռոյս երանաշնորհ Տ. Մեսրոպ Նշանեան պատրիարքին հետ, նոյն օրը : Կարճ եղաւ սակայն իր գործունէութեան ջջանք պատրիարքական Աթոռի վրայ, որովհետեւ մի քանի տարի ետք ան կ'ունենար կաթուած մը, որուն ի հետեւանք անկարող կ'ըլլայ իր պաշտօնը լիուլի կատարելու :

Հանգուցեալ Տ. Տիմոթէոս պատրիարք հմուտ էր քացի իր մայրենի լեզուէն ֆրանսերէնի եւ անգլիերէնի : Ունի շարք մը զործեր, աստուածաբանական եւ իմաստասիրական տեսութիւններու շուրջ, ու քազմաթիւ կրօնական զրութիւններ :

Հանգուցեալին յուղարկաւորութիւնը կատարուեցաւ երկուշարթի, 2 Յունուար 1956ի կէսօրէ ետք : Յուղարկաւորութիւն թափորը իր ճամբուն վրայ կանգ առաւ մայրավանքի աւագ զրան առջեւ, ուր կը սպասէին Տեղապահ Ա. Հայրը, Միաբանութիւն, ուսանողութիւն եւ ժողովուրդ : Հոն կատարուեցաւ հանգստեան տպաւորիս կարգ մը, օրմէ ետք Տեղապահ Ա. Հայրը «հոգւոց» մը արտասանեց հանգուցելոյն դաշտին վրայ, ու ընկերակցութեամբ աւագ թարգման Հոգ. Տ. Վազգէն Արեղայի հետեւեցաւ թափօրին մինչեւ Համբարձման լերան Գալիլիոյ յունական վանքը, ուր ամփոփուեցաւ մարմինը Ա. Պատրիարքին :

ՄԻՌՆ այս առթիւ, ի դիմաց Տեղապահ Ա. Հօր, կը հայցէ երկնաւոր Քահանայապետէն որ դասէ հանգուցեալը իր երանելի հայրապետներու շարքին, ու Ա. Հոգիին մխիթարութիւնը պարզեւէ սգաւոր յոյն Օթոստոքս Միաբանութեան :

